ՀՏԴ 581 Ընդհանուր բուսաբանություն

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Արմիդա ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր. *Կանաչապատում, բարդի սպիտակատերև, բռնչի խոշորաղլուխ, բռնչի մշտադալար, գիհի սովորական, գիհի դազախական, գիհի բազմապտուղ, գիհի գարշահոտ, գլեդիչա սովորական, գերիմաստի, եղևնի արծաթափայլ*

Ключевые слова: *Озеленение, тополь белый, калина крупноплодная, калина вечнозеленая, лавролистная, можжевельник обыкновенный, можжевельник многоплодный, можжевельник вонючий, гледичия обыкновенная, калина гордовина, ель колючая или серебристая*

Keywords: *Landscaping, Viburnum macrocephalum, Viburnum tinus, Juniperus communis L., Juniperus sabina L., Juniperus oblonga L. Juniperus foetidissima L. Gledetschia vulgaris (tricontes), Viburnum lantana, Picea pungens Angelm,*

А. Акопян

Современное состояние озеленения Степанакерта

Создание и охрана озеленения города на сегодняшний день являются одним из основных элементов экологического мониторинга окружающей среды.

В 2011 - 2014 гг. в Степанакерте было изучено современное состояние озеленения. Было выяснено, что в деле решения проблемы озеленения есть еще много недоделанных работ. Но, одновременно, необходимо отметить, что последние годы в этом направлении была проведена значительная работа. Рекомендуется учесть отмеченные в статье некоторые предложения.

A. Hakobyan

The Current State of Landscaping Stepanakert.

The creation and preservation of urban greening today is one of the main elements of environmental monitoring.

The modern state of landscaping was explored in Stepanakert in 2011-2014. It was found out that there was still much unfinished work in the solution of the landscaping problem. But at the same time, it is necessary to point out that significant work has been done in this direction recently. It is advisable to take into account some recommendations identified in the article.

Քաղաքի կանաչապատման ստեղծումը և պահպանումը այսօր հանդիսանում է շրջապատող միջավայրի էկոլոգիական մոնիտորինգի գլխավոր տարրերից մեկն է:

2011-14թթ. Ստեփանակերտում ուսումնասիրվել է կանաչապատման արդի վիճակը: Պարզվել է, որ կանաչապատման հիմնահարցը լուծելու գործում դեռ շատ անելիքներ կան: Միևնույն ժամանակ կարելի է նշել, որ վերջին տարիներին այդ ուղղությամբ տարվել են նշանակալից աշխատանքներ: Խորհուրդ ենք տալիս հաշվի առնել հոդվածում նշված որոշ առաջարկություններ:

Ներածություն: Քաղաքաշինության կառուցապատման համալիրում կանաչապատումը կարևոր բաղադրիչ է և կոչված է էկոլոգիական, բնակչության հանգստի օջախների ստեղծման, միկրոկլիմայի բարելավման ու, պարզապես, բնակավայրին գեղազարդ տեսք ապահովելու խնդիրների լուծմանը:

Գիտականորեն հիմնավորված կանաչապատումը ոչ միայն կարող է դառնալ տվյալ տարածքի բուսական կենսաբազմազանության պահպանության մասնիկը, այլև մարդկանց մոտ առաջ բերել էսթետիկական հաճույք և ճանաչողական դեր կատարել:

Ժողովրդի քաղաքակրթվածությունը բնորոշող ցուցանիշներից մեկն էլ տվյալ բնակավայրի կանաչապատման ընդհանուր վիճակն է: Ուրբանիզացված խոշոր քաղաքները չեն կարող չունենալ կանաչապատում: Այն մեծ դեր ունի մարդկանց սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման գործում, որովհետև մեղմում է կլիման, մաքրում է օդը փոշուց և այլ աղտոտվածություններից, ստվերարկում է իր տակ տոթ օրերին մարդկանց, մեղմում է քամին: Կանաչ տնկարկներում, բաց տարածությունների համեմատությամբ, արեգակնային ճառագայթումը մոտ 10 անգամ թույլ է, ջերմաստիճանը՝ 18-20^0 C.-ով ցածր: Բուսական ծածկոցը 20 անգամ ավելի շատ

խոնավություն է գոլորշիացնում, քան բուսազուրկ տարածքը: Ամռան ամիսներին պուրակներում օդի հարաբերական խոնավությունը բուսազուրկ տարածքների համեմատությամբ 10-20%-ով բարձր է: Հաշվարկված է, որ 1 հա կանաչապատ տարածությունը մեկ օրում կարող է կլանել 8 կգ ածխաթթու գազ և այնքան թթվածին արտադրել, որը կբավարարի 200 մարդու կանոնավոր շնչառության համար: Ուստի, եթե տվյալ բնակավայրում յուրաքանչյուր բնակչին ընկնի 50 մ 2 կանաչ տարածություն, ապա լրիվ կապահովվի թթվածնի պահանջվող քանակությունը: Կանաչ տարածությունների ներսում օդը հարուստ է նաև օզոնով, որն առաջանում է խեժերի գոլորշիացման շնորհիվ:

Կանաչ տարածությունները կլանում են աղմուկը՝ մարդկանց պարգևելով խաղաղ հանգիստ: Հաստատված է, որ աղմուկի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա հավասար է որոշ թունավոր նյութերի ազդեցությանը: Տարբեր տեսակի բույսեր օժտված են աղմուկից պաշտպանելու տարբեր հատկություններով: Լայնատերև անտառները փշատերևների համեմատությամբ ավելի լավ են պաշտպանում աղմուկից: Լայնատերև անտառները կլանում են ձայնային էներգիայի 25%-ը, իսկ 75 %-ը ցրում են:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ կանաչ տնկարկների բազմակողմ և լիարժեք օգտագործումը հանգեցնում է քաղաքի միջավայրի առողջացմանը:

Քաղաքի կանաչապատման ստեղծումը և պահպանումը այսօր շրջապատող միջավայրի էկոլոգիական մոնիտորինգի գլխավոր տարրերից մեկն է: Դրա հետ կապված հատուկ հրատապություն է առաջանում կանաչապատման համար օգտագործվող բույսերի տարատեսակների ընտրության հարցում: Այդ բույսերը պետք է ունենան դիմացկունություն և բարձր դեկորատիվություն / զարդարելու ընդունակություն/:

Մեր օրերում հսկայական է էկոհամակարգերի անտրոպոգեն աղտոտվածությունը, որի դեմ հենց մարդն էլ պետք է պայքար տանի: Արդի էկոլոգիական ճգնաժամային իրավիճակում կենսաբազմազանության և կենսոլորտի մաքուր պահպանությունը դարձել է առաջնահերթ հիմնախնդիրներից մեկը:

Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել Ստեփանակերտ քաղաքի կանաչապատման արդի վիճակը և առաջարկել որոշ հանձնարարականներ այդ ուղղությամբ:

Նյութը և մեթոդը: Հետազոտությունները կատարվել են 2012-2014 թթ.: Այդ ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ գույքագրում, լուսանկարում, երթուղարշավային հետազոտություններ, բույսերի տեսակային կազմի որոշում:

Հետազոտության օբյեկտ են հանդիսացել քաղաքի կանաչապատման համար օգտագործվող բոլոր ծառաթփատեսակները:

Արդյունքներ և քննարկում: Ստեփանակերտը հանրապետության արագ աճող խոշոր կենտրոններից մեկն է: Սովետական իշխանության տարիներին Ստեփանակերտը բուռն զարգացում էր ապրել: Բնակարանաշինարարության, գիտության, առևտրի, ճանապարհաշինարարական, արդյունաբերական ձեռնարկությունների և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի զարգացումը նպաստել են քաղաքային բնակչության աճին՝ բնական և գյուղական բնակավայրերից ներգաղթի ճանապարհով: Պետք է նշել, որ հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունների աճը հետ չի մնացել բնակչության աճից: Մինչդեռ վերջին տարիներին մայրաքաղաքում պարկաշինարարական աշխատանքներ շատ քիչ են կատարվում:

Հայտնի է, որ շինարարական օբյեկտները նախագծելիս հաշվի են առնում նաև տվյալ օբյեկտի կանաչապատումը, հաշվարկվում են պահանջվող ծախսերը և նախատեսվող կանաչապատման ծավալը: Արցախում կանաչապատման համար նախատեսվող ծախսերը շինարարական ծախ-

սերի համեմատ դեռևս շատ քիչ են: Քաղաքում շինարարական աշխատանքներ կատարելիս մեծ թվով ծառա- և թփատեսակներ են ոչնչացվում, ու օրեցօր նվազում են ներքաղաքային կանաչ տարածքները: Քաղաքում ոչ համամասնորեն շատացել են տրանսպորտային միջոցները, որոնք կենսոլորտն աղտոտող գործոն են, իսկ դրա լավագույն մաքրողը կանաչ բուսականությունն է, որի քանակը ոչ թե պիտի նվազի, այլև տարեցտարի աճի: Կանաչապատման համար կարևոր են նաև օգտագործվող ծառատեսակների առանձնահատկությունները:

Կանաչապատ տարածքը միայն խոտն ու ծառը չեն, այլ նաև դրանց նկատմամբ հոգատար վերաբերմունքն ու խնամքը, դրանց գեղազարդ տեսքի ապահովումը: Կանաչապատման համար ծառատեսակն ընտրելիս պետք է հաշվի առնել այն փաստը, որ մեր լեռնային երկիրն ունի օդի հարաբերական խոնավության բարձր մակարդակ, ուստի նպատակահարմար ենք գտնում տնկել լայնատերև ծառատեսակներ՝ լորենի, կաղնի, սոսի, հացենի, որոնք ավելի արագ կգոլորշիացնեն ջուրը և կիջեցնեն հողի և օդի բարձր խոնավությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ստեփանակերտում կանաչապատման մեջ օգտագործում են հիմնականում ոչ հեռանկարային, ստանդարտին չհամապատասխանող անորակ ծառեր ու թփեր: Մեր կանաչապատող կազմակերպությունները բավարարվում են դրսից բերված տնկանյութերով, որը տեղական պայմաններին վատ են հարմարված և, բացի դրանից, թանկ են նստում: Օրինակ, Հյուսիսային Կովկասից բերված արծաթափայլ եղևնու մեկ բույսի արժեքը կազմում է մինչև 20-50 դոլար, մինչդեռ տնկարաններում տեղական տեսակներ աճեցնելու դեպքում դրանց ինքնարժեքը բավականին ցածր կլինի: Ժամանակն է վերջապես մտածելու այն մասին, որ պետք է մեր հանրապետության յուրաքանչյուր կլիմայական գոտու համար ստեղծվել առանձին դիֆերեցված տնկարաններ:

ԼՂՀ բնակչության մեծ մասը իր հանգիստը նախընտրում է անցկացնել կանաչ գոտիների գրկում, պուրակներում: Հիմնական կանաչ գոտիները կազմող ծառատեսակներից են՝ լորենի կովկասյան՝Tilia caucasica, լորենի մանրատերև՝Tilia cordata, թաղարնի բոխատերև **(Zelkova carpinifolia),** կենի հատապտղային՝ Taxus beccata l., թխկի սոսիատերև՝Acer platanoides, թխկի դաշտային՝Acer campestre, սոճի սովորական կամ անտառային՝Pinus sylvestris, սոճի կովկասյան՝Pinus caucasica, եղևնի արծաթափայլ՝ Picea pungens, եղևնի սովորական՝Picea abies, թույա արևելյան՝Biota orientalis, գիհի բազմապտուղ՝juniperus obionga, գիհի գարշահոտ-juniperus foetidissima, գիհի սովորական, գլեդիչա սովորական՝Gledeschia tricanthos, ռոբինա կեղծ ակացիա՝Robinia pseudoacacia, կատալպա սովորական՝ Catalpa ovate, բռնչի մշտադալար /калина вечнозеленная или лавролистная/ Viburnum laurifolium:

ԼՂՀ խիստ բազմազան բնակլիմայական պայմանները պահանջում են կանաչապատման նորմաները որոշելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ունենալ դիֆերենցված մոտեցում:

Համաշխարհային մասշտաբով կանաչապատման խնդիրը լուծված է համարվում, եթե առաջնորդվում են հետևյալ նշանաբանով. **«ոչ թե կանաչը՝ քաղաքի ներսում, այլ քաղաքը՝ կանաչի ներսում»: Սա հնարավոր է իրագործել միայն ու միայն ինտենսիվ կանաչապատման շնորհիվ՝ կանաչապատման տակ դնելով կառույցներից ազատ բոլոր տարածությունները:**

Խորհուրդ է տրվում աճող և զարգացող քաղաքներում, այդ թվում և մեր մայրաքաղաք Ստեփանակերտում մեկ հեկտարի վրա տեղադրել 200-250 ծառ և 1000-1500 թուփ, իսկ համաձայն կանաչապատման նորմաների՝ բաց տարածությունները չպետք է գերազանցեն 15-20 %-ից: Պետք է լինեն նաև ջրային մակերեսներ՝ երբեմն կանաչ տնկարկների հաշվին: Պարկային տեսակները պետք է զբաղեցնեն տարածքի ընդամենը 5%-ը:

Այս նորմաները միանգամայն հարմար են մեր հանրապետության մայրաքաղաքի համար: Տվյալ դեպքում մեկ բնակչին պետք է ընկնի 30-40 մ² կանաչապատ տարածություն, ինչպես պահանջում է հանգստի համար լիարժեք նորման: Պետք է փարատել այն թյուր կարծիքը, որ հաճախ արտահայտում են ծառահատողները և կանաչ տարածքներ ոչնչացնողները: Ըստ նրանց՝ իրենք ծառ են կտրում՝ պարզապես մի ուրիշ տեղ տնկելու համար: Մասնագետները այլ կերպ են մտածում: Նրանց կարծիքով, նվազագույնը պետք է 15 տարի, որ նույն տնկին ունենա նույն էկոլոգիական և առողջապահական արժեքը, ինչն ուներ հին հատված ծառը: Բացի դրանից՝ կան բազմաթիվ գործոններ, որոնք կարող են խափանել տնկու աճը: Եթե մենք հատենք մեկ ծառ, պետք է փոխարենը տնկել նվազագույնը՝ 10-ը: Իրականում մենք չպետք է մտածենք ծառ կտրելու մասին, այլ խոսենք միայն տնկելու մասին:

Ստեփանակերտ քաղաքի նորակառույց շենքերի փողոցները, օրինակ Արցախ թաղամասը, կանաչապատման կարիք ունի: Նպատակահարմար է տնկել խիտ սաղարթ ունեցող բարձրահասակ ծառատեսակներ, ինչպիսիք են լորենի կովկասյանը՝ Tilia caucasica, լորենի մանրատերևը՝ Tilia cordata, արևելյան սոսին՝ **Platanus orientalis**, թխկիատերև սոսին՝ **Platanus acerifolia**, ամառային կաղնին՝ **Quercus robur**, կատալապա օվալատերևը՝ **Catalapa ovate G.,** դազախական գիհին՝**Juniperus Sabina (1; 3)**: Նման տեսակներն ընդունակ են բարելավելու շրջապատի սանիտարահիգիենիկ պայմանները: Մեր քաղաքը չափազանց գեղեցիկ լինելով գարնան, ամռան, աշնան ամիսներին՝ գորշ ու անհրապույր է դառնում ձմռանը: Պատճառն այն է, որ բնակավայրի կանաչապատման բնագավառում հիմնականում աճեցնում են տերևաթափ տեսակներ: Մինչդեռ, ինչպես ցույց է տվել կանաչապատման նախորդ տարիների փորձը, քաղաք Ստեփանակերտում հրաշալի աճում են այնպիսի մշտադալար ծառատեսակներ և թփատեսակներ, ինչպիսիք են տոսախ մշտադալարը՝ Buxus microphilla l. կամ կովկասյան արմավենին՝ Buxus sempervirens L. բոնչի մշտադալարը՝Viburnum laurifolium և այլ տեսակներ, որոնք ձմռան ամիսներին կարող են ինչպես զարդարել մեր քաղաքը, այնպես էլ կատարել սանիտարահիգիենիկ գործառույթ: Անհրաժեշտ է ունենալ ինժեներ-կանաչապատող մասնագետներ, որոնք լավ են պատկերացնում կանաչապատման խնդիրները, գիտեն ծառաթփային բուսականության կենսաբանական առանձնահատկությունները, ծանոթ են ժամանակակից քաղաքաշինության հիմունքներին և պարկաշինության նվաճումներին: Միևնույն ժամանակ պետք է ավելացնել նաև այն, որ հնարավոր չէ արմատապես լուծել մեր բնակավայրերի կանաչապատման խնդիրը՝ առանց բնակչության լայն խավերի ակտիվ մասնակցության և սրտացավ վերաբերմունքի:

Կանաչապատման համար բուսանմուշի ընտրումը շատ կարևոր է: Բուսանմուշը պետք է լինի բազմազան, ունենա գեղազարդություն, արդյունավետ մաքրի շրջակա միջավայրի օդը, ստեղծի սանիտարահիգիենիկ պայմաններ և ունենա միկրոկլիմայական նորմալ ցուցանիշներ աշխատանքի և հանգստի վայրերում:

Հարուստ բուսանմուշներ ունեն Արցախի անտառները: Բուսանմուշն ընտրելիս պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական հատկանիշները՝

- բույսի կենսաբանական և էկոլոգիական հատկությունները՝ արագ աճ, գազի, փոշու, ծխի հանդեպ կայունություն, ջերմա- և ստվերադիմացկունություն, ցրտա- և չորադիմացկունություն, քամու հանդեպ կայունություն, երկարակեցություն, հողի հանդեպ քիչ պահանջկոտություն,
- բույսի սանիտարահիգիենիկ հատկությունները՝ օդի մաքրումը փոշուց, պաշտպանումը քամուց, աղմուկից, զովության պահպանումը, ֆիտոնցիդներով հարուստ լինելը, ոչ ալերգիկ լինելը և այլն,

- բույսի գեղազարդ լինելը՝ ունենա բույր, երկարատև ծաղկի:

Կարևոր հանգամանք է ծառերի և թփերի խնամքի ագրոտեխնիկական և ֆիտոտեխնիկական միջոցառումների ճիշտ կիրառումը(2): Դրանք են որոշում ծառերի և թփերի երկարակեցությունն ու գեղազարդությունը:

Ծառերի կամ թփերի տնկանյութը տեղադրելիս պետք է հաշվի առնել շենքի կամ կառույցի հեռավորությունը դրանից, հետիոտների անվտանգությունը, անցումների հարմարությունը, ինչպես նաև տնկանյութի խտությունը: Իսկ տնկանյութի սանիտարահիգիենիկ նշանակությունը երևում է այն ժամանակ, երբ տվյալ տեղանքում կան համապատասխան քանակությամբ ծառեր և թփեր:

Ուշադրություն պետք է դարձնել ծառերի և թփերի տնկման տիպերին: Տնկանյութը հիմնականում տնկում են շարքերով և ծառուղիներով: Տնկանյութի տեսքը պետք է լինի համաչափ, ունենա ուղիղ ցողուն և բուն, առողջ արմատային համակարգ, արտահայտված կմախքային ճյուղեր, չունենա չոր և վնասված ճյուղեր, վարակված չլինի միջատներով և հիվանդություններով: Ծառերի սաղարթը պիտի լինի բարձր, չխանգարի հետիոտների ազատ շարժվելուն:

Ծառերի և թփերի տնկման հիմնական կանոնները: Արցախում տնկիները հիմնականում տնկում են գարնանը և աշնանը, որովհետև այդ ժամանակ բույսը հասցնում է ձևավորել լավ արմատային համակարգ և պատրաստ է ձմեռման: Տունկը սկսում են վաղ գարնանը՝ ձնհալից հետո, երբ դեռ չեն բացվել բողբոջները: Փոսերը փորում են տնկելուց 1-3 օր առաջ: Տնկվող բույսի արմատները պետք է փորված փոսում լինեն ազատ: Տնկելուց հետո պետք է ջրել:

Ստեփանակերտում կանաչապատվող տարածքները հիմնականում ոռոգվում են անձրևաջրերով: Վերջին տարիներին՝ ամռան շատ շոգ օրերին, որոշ կենտրոնական փողոցներում կանաչապատ տարածքները ոռոգվում են հատուկ ջրցան մեքենաներով: Պյատաչոկում անց է կացվել ջրման ստացիոնար համակարգ: Սակայն կանաչապատ տարածքների ոռոգման հարցը Ստեփանակերտում դեռևս համարվում է չլուծված: Տարեց ծառերի ջրման ընդունված նորման մեկ ծառի համար 700-900լ է, թփինը՝ 300-400 լ, պետք է ջրել 15-20 օր ընդմիջումներով: Ծառերը և թփերը պետք է ամեն տարի պարարտացվեն:

Ծառերի էտումը և ձևավորումը: Էտի նպատակն է ստեղծել համահարաբերակցություն սաղարթի և արմատային համակարգի միջև: Էտման միջոցով ձևավորում են սաղարթը, հնարավորություն են տալիս, որ տերևներում սինթեզված օրգանական նյութերը լավ յուրացվեն արմատային համակարգի և գեներատիվ օրգանների կողմից, արագացնում կամ դանդաղեցնում են ծաղկումը, կանխում են հիվանդությունների տարածումը և այլն: Էտման միջոցով երիտասարդացնում են ծառը, որի նպատակն է ծեր սաղարթի փոխարինումը նորով: Ծեր ծառն էտելով՝ արհեստականորեն խախտում են արմատային համակարգի և վերգետնյա օրգանների միջև հավասարակշռությունը՝ ստիպելով ծառին կարճ ժամանակում վերականգնել այդ հավասարակշռությունը, արթնացնել քնած բողբոջները: Արդյունքում առաջանում են երիտասարդ ճյուղեր: Ծառը երիտասարդացնում են, եթե այն չորացել է 55-60 %-ով, բունը խիստ ծերացել է, աճը դանդաղ է ընթանում կամ վարակված է հիվանդություններով:

Նշված կանոնների պահպանումով կարելի է հասնել մեծ հաջողությունների շրջապատի կանաչապատման գործում:

Ստեփանակերտի դենդրոպուրակների տեսակային բազմազանությունը: Կանաչ գոտիները, որոնց թվում են պուրակները, զբոսայգիները, անտառատնկարանները, մեր կյանքում կատարում են սոցիալական մի շարք կարևորագույն գործառույթներ՝ առողջության պահպանման,

հանգստի ապահովման, մատաղ սերնդի դաստիարակության, զբոսաշրջության զարգացման և այլ խնդիրներում: Մեր օրերում յուրաքանչյուր անձ պետք է լավ իմանա կանաչ տեսակների տեղն ու դերը, որից էլ ձևավորվում է նրանց պահպանման և բնական օգտագործման կուլտուրան: Համաշխարհային պարկաշինության արվեստի հարուստ փորձին տիրապետելով և դրան համադրելով հայկական ճարտարպետության յուրօրինակ ոճը՝ հնարավորություն կունենանք ապագայում հպարտանալու մեր պարկաշինության արվեստով:

Ստորև ներկայացվում է Ստեփանակերտի դենդրոպուրակների տեսակային կազմը(**1**, **3**):

Աղյուսակ 1

Ստեփանակերտ քաղաքի կանաչ պուրակներում աճող դենդրոտեսակները

Բուսատեսակի անվանումը			
Հ/Հ	Հայերեն	Ռուսերեն	Լատիներեն
1	2	3	4
1.	Ասպիրակ մոխրագույն	Спирея	Spiraea cinerea L.
2.	Ալբացիա կամ մետաքսյա ակացիա	Альбиция или шелковая акация	Albizia julibrissin
3.	Բարդի հինածաղկատերև	Тополь бальзамический	Populus balsamifera L.
4.	Բարդի սև	Тополь черный	Populus nigera
5.	Բարդի սպիտակատերև	Тополь белый	Populus alba
6.	Բոնչի խոշորագլուխ	Калина крупноплодная	Viburnum macrocephalum
7.	Բոնչի մշտադալար	Калина вечнозеленная лавролистная	Viburnum tinus
8.	Գիհի սովորական	Можжевельник обыкноженный	Juniperus communis L.
9.	Գիհի ղազախական	Можжевельник казацкий	Juniperus sabina L.
10.	Գիհի բազմապտուղ	Можжевельник многоплодный	Juniperus oblonga L.
11.	Գիհի գարշահոտ	Можжевельник вонючий	Juniperus foetidissima L.
12.	Գլեդիչա սովորական	Гледичия обыкновенная	Gledetschia vulgaris (tricontes)
13.	Գերիմաստի	Калина гордовина	Viburnum lantana
14.	Եղևնի արծաթափայլ	Ель колючая или серебристая, По характеру роста: 1.колоновидная 2.компактная По окраске хвои: 1.зеленая 2.голубая 3.серебристая	Picea pungens Angelm, 1.Picea p. Columnaris Sch. 2.Picea p. Compacta Richler 1.Pice pungens Viridi Reg. 2.Picea pungens glauca Reg. 3.Picea pungens argentea R.
15.	Եղևնի սովորական	Ель обыкновенная	Picea abies karast
16.	Թույա կամ բիոտա արևելյան	Туя или биота восточная	Thuja / Bioata orientalis L.
17.	Թույա կամ բիոտա արևմտյան	Туя или биота западная	Thuja / Biota ,
18.	Թխկի դաշտային	Клен полевой	Acer campestre L.
19.	Թխկի սոսիատերև	Клен остролистный	Acer platanoides L.

20.	Թխկի կեղծսոսիատերև	Клен ложноплатанолистный	Acer pseudoplatanus L.
21.	Թաղարնի բոխատերև	Дзельква граболистная	Zelkova carpinifolia
22.	Թավիշ սովորական	Плющ обыкновенный	Hedera belix
23.	Իլենի սովորական կամ եվրոպական	Бересклет обыкновенный или европейский	Euonimus europaea
24.	Իլենի ճապոնական	Бересклет японский вечнозеленый	Euonymus japonica
25.	Լորենի մանրատերև	Липа мелколистная	Tilia cordata
26.	Լորենի կովկասյան կամ խոշորատերև	Липа кавказская или крупнолистная	Tilia caucasica
27.	Կաղնի վրացական	Дуб грузинский	Quercus iberica
28.	Կաղնի ամառային	Дуб летний	Quercus robur
29.	Կաղնի խոշորառէջ	Дуб крупнопыльниковый	Quercus macrantera
30.	Կաղնի արևելյան	Дуб восточный	Quercus orientalis
31.	Կենի հատապտղային	Тис ягодный	Taxus baccata L.
32.	Կեչի սպիտակ	Береза белая	Betula alba L.
33.	Կատալպա օվալատերև	Катальпа овалалистная	Catalpa ovate
34.	Կրիպտոմերիա ճապոնական	Криптомерия японская	Cryptomeria japonicum
35.	Կերիա ճապոնական	Керия японская	Kerria japonica
36.	Յասաման սովորական	Сирень обыкновенный	Syringa vulgaris
37.	Յասաման չինական	Сирень китайский	Syringa chinensis
38.	Յասաման պարսկական	Сирень персидский	Syringa persoka
39.	Յուկկա	Юкка славная	Yucca gloriosa L.
40.	Ռոբինիա կեղծակացիա	Робыния лжеакация	Robina pseudoacacia
41.	Սոճի կովկասյան	Сосна кавказская	Pinus hamata
42.	Սոճի սովորական կամ անտառային	Сосна обыкновенная	Pinus sylvestris
43.	Սոսի արևելյան	Платан восточный	Platanus orientalis
44.	Սոսի թխկիատերև	Платан кленалистный	Platanus acerifolia
45.	Տոսախ կամ կովկասյան արմավենի մշտադալար	Самшит или букус вечнозеленый	Buxus sempervirens L.
46.	Տոսախ մանրատերև	Самшит или букус мелколистный	Buxus microphilla L.
47.	Ցռպտղի հորիզոնական	Кизильник горизонтальный	Cotoneaster horizontalis
48.	Ուռենի սպիտակ կամ լացող	Ива плакучая	Salix alba L.
49.	Ֆորիզիցա օվալատերև	Форизиция овалолистая	Forsycia ovate
50.	Ֆորիզիցա միջին	Форизиция средняя	Forsycia intermedia

Եզրակացություններ և առաջարկություններ

Ուսումնասիրելով Ստեփանակերտ քաղաքի կանաչապատման հիմնահարցը՝ կարելի է նշել՝

1. Այստեղ կանաչապատման մասին, որպես քաղաքաշինության լիարժեք բաղկացուցիչ մասի, դեռևս վաղ է խոսել:

2. Պետք է նկատի ունենալ, որ փողոցները հանդիսանում են բնակավայրերի դեմքն են, և դրանց արտաքին տեսքով է բնորոշվում քաղաքի բարեկարգման ու մշակույթի զարգացվածության աստիճանը: Սակայն, ցավոք, մեզ մոտ դեռևս անելիքներ շատ կան:

3. Փողոցների կանաչապատումն իրականացնելիս պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

- Ծառերը պետք է տնկվեն բանուկ հատվածներից 1,2 - 1,5 մ, իսկ մոտակա կառույցից՝ առնվազը 5 մ հեռավորության վրա:

- Բնակելի, մանկական, բուժական, ուսումնական և արտադրական նշանակության շենքերում լուսավորության նկատմամբ հատուկ պահանջների դեպքում, մերձակա տարածքում կանաչ գոտի հիմնելիս ծառերի հեռավորությունը կառույցից պետք է կազմի հարավ-արևմտյան կողմնադրությունում հասուն ծառի բարձրության կրկնապատիկը, իսկ հյուսիսային, հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան կողմնադրությունում՝ բարձրության չափից 1,5 անգամ ավելի: Շենքից դեպի հարավ կողմնադրությունում այն պետք է լինի հասուն ծառի բարձրության չափ:

- Ծառերը կամ թփերը խմբերով տեղաբաշխելիս, բացի տեսակաշարի ընտրությունից, պետք է հաշվի առնել նաև նրանց միջև եղած հեռավորությունը, որպեսզի ապագայում բույսերի սաղարթները կարողանան ազատ զարգանալ և դրսևորել իրենց բնորոշ բնապահպանական և գեղազարդ հատկանիշները:

- Փողոցների խաչմերուկներում տնկիների սաղարթը չպետք է ծածկի վարորդների տեսադաշտը:

- Հաշվի առնելով քաղաքի տարածքում տեղումների առատությունը՝ խորհուրդ ենք տալիս բնակելի շենքերի, դպրոցների, մանկապարտեզների բակային տարածքներում տնկել լայնատերև ծառատեսակներ:

- Քաղաք Ստեփանակերտում հրաշալի աճում են մշտադալար ծառատեսակներ և թփատեսակներ, որոնք ձմռան ամիսներին կարող են ինչպես զարդարել մեր քաղաքը, այնպես էլ կատարել սանիտարահիգիենիկ ֆունկցիա:

Գրականություն

1. Ղազարյան Ռ. Ս., Բույսերի տեսակների հայերեն–ռուսերեն–լատիներեն բառարան, Երևան, 1981:

2. Кочарян К.С., “Озеление населенных пунктов Арцаха /НКР/”, Степанакерт, Изд. Дизак плюс, 2011.

3. Сосновский Д. И, Л.Б. Махмадзе, “Краткий определитель деревьев и кустарников”, Ереван, 1950.

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմիդա Հակոբյան – ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի դոցենտ
E-mail: armida_hakobyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Ա.Ա.Գուլյանը